

Մարտ 2, 1973

Արժանաշնորհ
Տ. Տիրան Զհնյ. Փափազեան
Հովիւ Ս. Գրիգոր Մարեկացի Եկեղեցւոյ
Գլխավէնտ.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Գեր. Տ. Թորգոմ Արք. Սանուկեան ստացած է
Փետրուար 6 թուակիր 2եր նամակը, որով տուած էիք ցանկերը Ժիւ-
կան Խորհուրդի նորընտիր անդամներուն եւ նորընտիր պատգամաւորնե-
րուն, խոստալով որ պիտի յղէիք տարեկան տեղեկագիրները եւ քուէար-
կութեանց արդիւնքները:

Հաճեցէք փութով դրկել հետեւեալ նիւթերը

1. Ժիւկան Ժողովին մէջ կատարուած քուէարկութեանց արդիւնքը
Ժիւկան Խորհուրդի նոր անդամներուն եւ նոր պատգամաւորներուն
2. Ժիւկան Ժողովին ներկայացուած տեղեկագիրները
3. Առաջնորդարանէն 2եզի դրկուած տպագրեալ տեղեկագիրը
4. Նորընտիր պատգամաւորներուն հասցէները

որպէսզի նորին Սրբութիւնը վաւերացնէ Ժիւկան Խորհուրդի անդամու-
թեան համար ընտրուած անձերը:

Խորին յարգանք

Սուրէն Սանուկեան
Իււանապետ